

հացի աղբիւր մինակ այրին կայ. հիմա կը խորհիմ՝ թե-
րեւս մանկամարդ. հիմա կը խորհիմ՝ ենթակայ հա-
զարումէկ փորձանքներու. հիմա կը խորհիմ՝ ինքզինքը
մոռնալու իսկ անկարող, քանի որ մեր քաղաքակրթու-
թիւնը ո՛չ միայն հացը կը բաշխէ իր ուզածին պէս, այ-
սինքն՝ անհուն լրբութեամբ, այլեւ իր ստորին կիրքերուն
յագուրդ կը հետապնդէ աղքատներուն կարիքներուն ու-
ղիով: Ո՛վ իմ մայրը. դուն ի՛նչ արցունք եղար ինծի, շատ
աւելի ետք, Մաթիկէն ալ ետքը, երբ թաղեցիր մէկիկ-
մէկիկ աչքիդ լուսերը ու անդրանիկիդ գերեզմանին առ-
ջեւ հող ուզեցիր քու գլխուդ...

Բայց պէտք է քաշել: Ու ձգել, որ իրենք իրենց մեծ-
նան որբերը, դժուար, արագ, քարի պէս՝ քարերուն վրայ:
Յաճախ անօթի լուսցուած գիշերը կապելով յաջորդին:
Լալ իսկ վախնալով՝ աւելի չանօթենալու համար, ինչպէս
կը խնդրէր մաման: Յաճախ ցերեկն ալ պահելով վերմակը
վրագ, քանի որ դուրսը ձիւն է հասակէդ աւելի, ու սուղ
ածուխը՝ հացէն աւելի: Ու պէտք չէ սառիլ, նոյնիսկ երբ
մատներուդ մորթը փակչի երկաթին, այնտեղ ձգելով
մաս մը ճերմակի: Ու մեծնան, մեծնան: Աղտին ու նա-
խատինքին, ցաւին ու ողորմութեան, գրեթէ մօտիկ մու-
րացողներուն: Չհասկնալով ինչո՞ւ մաման գովք կ'ըսէ
այնքան շատ անգամ, իր լալը ձգած հիւղակին դռնէն,
բոլորէն տեսանելի կտաւի մը պէս սեւ ու սառուցիկ, երբ
տղաքը զուարթ են հացով, պտուղով ու խաղէն գինով:
Ինչո՞ւ կը կանչէ հեռու հայրիկը սա անմեղներուն, զա-
նոնք փողոցին ձգած այդպէս վաղ: Թող գայ այդ հայրիկը
ու դնէ տղան իր հիւանդ լանջքին, շրթները լայնէ ու
պագնէ մէկ-մէկ...: Տղաքը գիտեն այդ գովքին բոլոր
բառերը, այնքան յաճախ եղեր են այդ բառերուն լացին
մէջ ու կը զարմանան լալկան մամային, քանի որ իրենք
փողոցի երեսին հիմա շուք ունին ու կռիւէն ալ չեն ընկր-
կիր...

Մայրերու կեանք: Ո՞րն է վէպը, որ կարենար հա-
ւասարիլ քեզի: Վասնզի տասը, յիսուն, հարիւր, հազար